ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎԱՂԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Ամեն ինչ ունայն, երազ անցավոր,
Աստղ էլ որ լինես՝ պիտ հանգչիս մի օր:
Ավ. Իսահակյան

Կյանքի վաղանցիկությունը ապացուցման կարիք չունի. ամեն մեկիս կենսական առաջին դասերից մեկը, թերևս, վախճանականության՝ մահկանացու լինելու զգացողությունն է: Եվ մանկությունից պատանությանն անցման շրջանում ինքնուրույն ձևավորված մեր աշխարհայացքի մեջ անխուսափելի է լինում «Եթե, միևնույնն է, մահանալու ենք, էլ ինչո՞ւ ենք ապրում» հարց-դատողությունը: Այսինքն՝ կյանքի վաղանցիկության զգացումն է հենց ծնում ապրել-չապրելու իմաստի մասին այն հարցը, որ ամեն ոք երբևէ ինքն իրեն տալիս է: Եվ սա եզակի, բախտորոշ հարց է, նման չէ մյուս բոլոր հարցերին, որոնց պատասխանը մեր հետաքրքրասիրության պարզ բավարարումն է լինում: Կյանքի իմաստի որոնումը մեզ տառապանք է պատճառում, վախճանի անխուսափելիության գիտակցումը մատնում է հուսահատության, մահվան հեռանկարը սարսափահար է անում:

Շատ խիստ չի հնչի, եթե ասենք, որ մահվան վախն է մարդուն մղում դեպի կյանքի իմաստավորում, այլ կերպ ասած՝ դարձնում նրան իմաստասեր՝ փիլիսոփա, թեպետ հասկանալի է, որ ամեն մարդ չէ, որ զբաղմունքով դառնում է փիլիսոփա (և իրապես կզարմանա, եթե իրեն ասվի, որ «փիլիսոփայությունը մտածմունք է մահվան մասին»). հանդերձյալ երանելի կյանքի մասին կրոնի խոստումները, հարստության մոլուցքը, իշխանության տենչը, մարմնական վայելքները, սպառողական հաճույքները մարդկանց մեծ մասին լիովին բավարարում են:

Այդուհանդերձ, պիտի ենթադրել, որ եթե մարդը լիներ անմահ, նման հարց ինքն իրեն, թերևս, չէր տա, և միայն փիլիսոփաները ընդհանրացման և իմաստավորման իրենց հակվածությամբ շարունակ կխորհեին մարդ արարածի կյանքի իմաստի մասին: Սա, իսկապես, փիլիսոփայական մտքի առանցքային հարցադրումներից է, և ինչպես ամեն մի շիտակ փիլիսոփայական խնդիր, հավիտենական է՝ երբեք վերջնական լուծում չի ստանում և չի կարող ստանալ: Եթե գիտական խնդրի լուծումը հարստացնում է գիտական գիտելիքի շտեմարանը,

իսկ լուծված խնդիրը, որպես կանոն, թեկուզ առժամանակ այլևս չի էլ ընկալվում որպես խնդիր, ապա փիլիսոփայական խնդիրը, առավել ևս կյանքի իմաստին առնչվողը, չունի նմանօրինակ լուծում, և այդ «լուծումն» իրականում տվյալ փիլիսոփայի կենսական դիրքորոշման ձևակերպումն է աշխարհի և աշխարհում մարդու տեղի մասին ամբողջական պատկերացման՝ աշխարհայեցման անձնական տարբերակը:

Մահվան վախն անբաժանելի է կեցությունից: Եվ ասել, թե որևէ մեկն ազատվել է մահվան վախից, նշանակում է ասել, որ նա արդեն դադարել է ապրել, վճռել է վերջ տալ կյանքին, այլևս ոչինչ չի կապում կյանքի և ապրողների հետ. նման վճիռ կայացնողն արդեն իսկ քայլ է կատարել կեցությունից անդին, ինքնասպանության հետագա արարքը, ավելի ստույգ՝ դրա կերպը զուտ «տեխնոլոգիայի» հարց է:

Մենք բոլորս, գրեթե բոլորս բարեհաջող անցնում ենք որոնումների, տատանումների, երկմտանքի փուլը. «բարեհաջող» ասելով նկատի ունեմ, որ չենք խելագարվում, ինքնասպան չենք լինում անխուսափելի վախճանի հեռանկարից: Դեռ ավելին, մենք, բարեբախտաբար, «մոռանում ենք» այդ վախճանը: Այլոց մահը բազմիցս տեսնելիս, հարազատի անդառնալի կորուստը ցավագին ապրելիս, նաև՝ մերթընդմերթ սեփական հուղարկավորության սցենարը մտմտալիս մենք, այնուամենայնիվ, մեզ անձամբ... վերագրում ենք անմահություն:

Խոսքն այստեղ հոգու անմահության մասին չէ, որի հանդեպ հավատը, առավել ևս՝ հանդերձյալ կյանքի գոյության մեջ անսասան համոզվածությունը հավատացյալին իսկապես դարձնում են «անմահ»: Խոսքն առօրեականության թմբիրի մասին է՝ որպես հետևանք մեր անվերջանալի առտնին հոգսերի, ապրուստի հայթայթման, մերձավորների ապահովության մասին մտածմունքի, մասնագիտական զբաղմունքին և քաղաքացիական մասնակցությանն առնչվող անվերջանալի խնդիրների: Գոյության այս հզոր հորձանքն է ահավասիկ օգնում մեզ ապրելու, կրթվելու, մաքառելու, ընտանիք կազմելու, գործելու, ապագայի մասին խորհելու և այլն:

Այլ կերպ ասած՝ մեզանից շատ շատերի համար կյանքի իմաստի խնդիրը պարզաբանվում է ինքնաբերաբար. մի կողմից՝ բուն կյանքի փոքրիշատե կարգավորված, միապաղաղ ընթացքն է աստիճանաբար ավելորդ դարձում կենաց-մահվան շուրջ մտորումների անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ կրթահամակարգը, կրոնական դաստիարակությունը, արվեստի շատ տեսակներ և դրանցով քարոզվող-արմատավորվող ապրելակերպը, սպառման և ժամանցի հնարավորությունների ընդլայնումը, ժամանակակից մարդու ամեն մի հարցը պատրաստակամ բավարարող ամենագետ «Google»-ը մեզ են մատուցում պատրաստի պատասխաններ՝ դարձյալ ավելորդ դարձնելով կենսիմաստային բնույթի հարցադրումները: Բայց դրանք լիովին չեն վերանում և չեն էլ կարող վերանալ. դրա մասին են վկայում, օրինակ, զարգացած և բար-

գավաճ հասարակություններում անակնկալ, «անբացատրելի» ինքնասպանությունների աճը, նույնքան անակնկալ և «չպատճառաբանված» տարատեսակ բռնությունները, կրոնական մոլեռանդության դրսևորումները, խավարամոլության զանգվածային բռնկումները, նաև՝ արևմտյան մտավորականության հակումը դեպի արևելյան փիլիսոփայությունները, դեպի միստիցիզմը և այլն:

Այս երևույթների պատճառն այն է, որ մարդ արարածին ներքնապես է բնորոշ կյանքի իմաստի որոնումը: Եվ որքան էլ «բանական մարդու» էության այլափոխման համար ներկայում շրջանառում են «սպառող», «զվարճացող», «խաղացող» և հեդոնիստական այլ պիտակավորում-բնութագրումները, միևնույնն է, մարդու էութենական բնութագիծը իր գոյության իմաստի որոնումն է, որոշակի, հատկապես իրեն բավարարող իմաստի փնտրտուքը: Մարդը «իմաստ փնտրող կենդանի» է: Քանի դեռ մարդն ապրում է, նա ունի կենսիմաստային հարցադրումների սեփական լուծումները՝ զուտ զգայական կամ մտահայեցողական բնույթի, ողջախոհության մակարդակում կամ գաղափարապես խստիվ հիմնավորված, խորապես քողարկված կամ անթաքույց դրսևորվող: Ի վերջո այդ լուծումների վրա էլ խարսխվում են հասուն անհատի արժեքային համակարգը, նորմատիվային կողմնորոշումները, հանրային և անհատական կյանքի զանազան երևույթների հանդեպ դիրքորոշումները:

Կենդանիները չեն որոնում կյանքի իմաստը և չեն տառապում իմաստի կորստից: Բնազդն անխափան է, և կենդանին անվերապահորեն ենթարկվում է բնազդի պահանջին: Վերջինիս շնորհիվ է կենդանին գործում անվրեպ, նպատակասլաց, բայց դրա պատճառով էլ կենդանին զուրկ է ինքնուրույն նպատակադրման կարողությունից: Մինչդեռ մարդը, ինչպես նկատում է Արթուր Շոպենհաուերը, ապրում է երկակի կյանքով՝ in concreto և in abstracto: Կենդանու պես մարդն էլ է ապրում միանգամայն որոշակի կենսական հոգսերով, բայց կա նաև նրա երկրորդ կեցությունը՝ «առաջին կյանքի և աշխարհի այդ հանդարտ արտացոլումը», «հանդարտ խորհրդածության ոլորտը»: Դրա շնորհիվ է, որ մարդն ունակ է ոչ միայն իր որոշակի դերը խաղալ, այլև կողքից դիտել սեփական դերը և խորհրդածել դրա մասին: Այդօրինակ վերացարկման, ինքնահայեցման, ինքնագնահատման կարողությունն է բանական մարդու առավելությունը. նա միակ կենդանին է, որ ունակ է իրական կյանքում նպատակ դնելու և կենսագործելու: «Այս երկակի կյանքից է ծագում մարդուն մտքից զուրկ կենդանուց այդքան զանազանող այն հանդարտությունը, որով նա, ըստ կանխավ արված մտորումների կայացված վճռի կամ էլ որպես ճանաչված անհրաժեշտության հետևանք, սառնասրտորեն ընդունում և իրագործում է իր համար առավել կարևոր, հաճախ առավել սարսափելի քայլը՝ ինքնասպանություն, մահապատիժ, մենամարտ, կյանքի համար վտանգավոր և հանդուգն տարաբնույթ արարքներ և առհասարակ այն ամենը, ինչի դեմ

ծառանում է նրա կենդանական բնույթը»[1]:

Անտարակույս, նպատակասլացության առումով կենդանու վարքը երբեմն գերազանցում է մարդկայինին (ճարտարապետի և մեղվի մարքսյան նշանավոր համեմատությունը «Կապիտալի» առաջին հատորում), սակայն մարդու առավելությունը *նպատակադիր նպատակասլացության* կարողությունն է: Սա նշանակում է, որ մարդն ունի նպատակ ընտրելու, նպատակ ձևավորելու, նպատակ առաջադրելու հնարավորություն, ինչն արդեն ենթադրում է տվյալ նպատակադրումը որոշակիորեն իմաստավորելու անհրաժեշտություն: Նպատակի ընտրությունը զուտ տեխնոլոգիա չէ, նախօրոք հայտնի քայլաշար չէ. ներառում է ընտրողի, նպատակի մասին որոշում կայացնողի արժեքային, բարոյական, հուզական, սոցիալական, հոգեբանական, մասնագիտական բնութագրերը, խառնվածքը, փորձառությունը և այլն:

Դյուրին է դեպի նպատակը քայլ անելը, եթե նպատակը կատարողին պարտադրված է. հրամանն անվերապահորեն կատարելը լոկ նպատակասլացություն է պահանջում կատարողից, բայց ոչ նաև նպատակադրում՝ հիմնավորում և պատասխանատվություն: Նպատակասլաց գործելիս գործողը, որպես կանոն, չի իմաստավորում նպատակը, քանի որ զուրկ է եղել պատասխանատու ընտրությունից, մինչդեռ նպատակադրումը իմաստալից է դարձնում նաև նպատակասլացություն ապահովելու առավել նպատակահարմար եղանակներն ու միջոցները:

Առասպելական Սիզիփոսը զուրկ էր սեփական վարքը իմաստավորելու հնարավորությունից. նրա տառապանքի աղբյուրն այն չէ, թե «դա շատ դժվար, բայց ապարդյուն աշխատանք է»[2], «անվերջանալի աշխատանք է՝ առանց օգուտի»[3], «անօգուտ աշխատանք»[4]: Ոչ թե ապարդյուն, անօգուտ լինելը, այլ հատկապես անիմաստությունն է տառապանքի պատճառը: Սիզիփոսը դատապարտված էր հավիտենաբար իմաստ որոնելու և երբեք չգտնելու: Նա կատարում է լիովին նպատակասլաց աշխատանք, բայց ինքը չէ նպատակադրման սուբյեկտը. քարը սարի ստորոտից դեպի կատարը շարունակաբար բարձրացնելը ինքնակամ չէ, այլ պարտադրված (Զևսի պատիժը): Մինչդեռ Պենելոպեն, տեխնոլոգիական առումով կատարելով միանգամայն «սիզիփոսյան աշխատանք» (ցերեկը գործում էր սկեսարի՝ Լայերտի համար նախատեսվող պատանը, գիշերը՝ գաղտագողի քանդում գործածի չափով), իրականում լիովին իմաստալից զբաղմունք է կատարում (ժամանակ է շահում՝ մինչև Ոդիսևսը վերադառնա և կնոջը նեղող անպատկառ փեսացուների վերջը տա):

---

[1] **Шопенгауэр А.** Мир как воля и представление. Т. 1, М., 1993, с. 218.

[2] **Ն. Ա. Կուն**, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ 5:

[3] **Камю А.** Миф о Сизифе // **Камю А.** Творчество и свобода. Сборник / Пер. с франц., М., 1990, с. 106.

[4] «Google» թարգմանիչը «սիզիփոսյան աշխատանք»-ի համար առաջարկում է հենց այդ «անօգուտ աշխատանք» համարժեքը (Useless job):

Ինչ վերաբերում է Սիզիփոսի կատարածին՝ «սիզիփոսյան աշխատանքին», ապա եթե ելնենք աշխատանքի շիտակ ըմբռնումից՝ որպես սուբյեկտի և օբյեկտի միասնություն, որպես սուբյեկտի օբյեկտացում և օբյեկտի սուբյեկտացում, ապա դա առհասարակ աշխատանք չպիտի անվանվի, այլ պարզապես դաժան ծաղրի տեսակ: Իրականում Սիզիփոսը զուրկ է սուբյեկտայնության հատկանիշից. նա Զևսի քինախնդիր ձեռնածության զոհն է:

Իհարկե, այստեղ այլ մոտեցում էլ է հնարավոր: Մասնավորապես, Ալբեր Կամյուն դիտարկում է Սիզիփոսի վերաբերմունքը սեփական վիճակին, վերագրում նրան մտորումներ, որոնք դատապարտյալին գրեթե հերոս են դարձնում, արձանագրում է «Սիզիփոսի լռիվ ուրախությունը», տեսնում դրա մեջ «աբսուրդ հաղթանակի բանաձևը». «Եվ չկա այնպիսի բախտ, որից հնարավոր չլինի վեր բարձրանալ արհամարհանքի շնորհիվ»[5]:

Լիովին համաձայնելով վերջին ձևակերպմանը՝ այդուհանդերձ պիտի նկատել, որ հարցադրումն այլափոխված է: Չէ՞ որ Սիզիփոսը մարդկային անլուր տառապանք է կրում, քանի որ ոչ մի միջոց չունի ներքնապես իմաստավորելու սեփական «աշխատանքը»: Ֆրանսիացի նշանավոր փիլիսոփան խոսում է այն մասին, թե ինչ կերպ կարող էր Սիզիփոսը վերաիմաստավորել պատժվածությունը, իրեն ներշնչել, թե ինքը կոտրված չէ, սպառված չէ, ինքն իր բախտի տերն է: Ստոիկյան փիլիսոփայությանը բնորոշ այս դիրքորոշումը, իսկապես, կենսական շատ իրավիճակներում միակ հնարավորն է և, ի դեպ, հանգամանորեն ներառված է ավստրիացի հոգեբույժ Վիկտոր Ֆրանկլի հայեցակարգի մեջ[6]: Ըստ վերջինիս՝ կյանքի իմաստը մարդը գտնում է եռակի ճանապարհով՝ ինչ ես տալիս (արարում, ստեղծագործում), ինչ ես վերցնում (հույզեր, պատկերացումներ), ինչպիսին է քո վերաբերմունքը քո վիճակին, երբ ի վիճակի չես իրականացնելու կյանքի իմաստավորման այդ երկու եղանակները՝ ո՛չ տալ, ո՛չ վերցնել: Զորօրինակ՝ երբ գամված ես անկողնին: Այս դեպքում ահա իմաստավորման եղանակն է տեր դառնալ քո «Ես»-ի և վիճակիդ միջև փոխհարաբերությանը, տնօրինել սեփական բախտը: Այս առումով Ֆրանկլի-Կամյուի տեսակետը ըմբռնելի է: Սիզիփոսը, իսկապես, չի կարող փոխել իրականությունը, չի կարող ազատվել իր հավիտենական պատժից (եթե վերջինս, դիցուք, որոշակի ժամկետ ունենար, ապա նրա «աշխատանքը» կիմաստավորվեր. քարի ամեն մի բարձրացումը-գլորումը ժամանակ է ծախսում և մոտեցնում ազատման պահին), բայց նա հնարավորություն ունի փոխելու իր վերաբերմունքը սեփական վիճակի հանդեպ: Սիրել, ատել, հաճույք ստանալ, տոկալ և այդ տոկունությամբ ցույց տալ Զևսին, որ «սուբյեկտ»–«օբյեկտ» փոխհարաբերության (Սիզիփոս–պատիժ) տվյալ տիրույթում գերիշխողը իր կամքն է, ոչ թե Զևսինը:

---

[5] **Камю А.** Миф о Сизифе, с. 107.

[6] Տե՛ս **Франкл В.** Человек в поисках смысла / Пер. с англ. и немец. М., 1990:

Մեկնաբանության այս կետից սկսած՝ դժվար է համաձայնել Կամյուի և Ֆրանկլի հետ, քանի որ սեփական անհուսալի վիճակի իմաստավորումը, հատկապես Սիզիփոսի պարագայում, դույզն-ինչ չի փոխում նրա բուն զբաղմունքի, ուրեմն և կյանքի (որքանով որ հնարավոր է «կյանք» անվանել նրա գոյավիճակը) անիմաստությունը: Եվ տվյալ դեպքում Սիզիփոսն անգամ զրկված է սուբյեկտայնությունից. որքան էլ, հնարավոր է, մեզնից վիրավորվի Սիզիփոսը, այստեղ սուբյեկտ–օբյեկտ փոխհարաբերության մեջ նա օբյեկտն է, ենթակա Զևսի՝ սուբյեկտի կամքին: Եվ ինչպես որ Հեգելի քննարկած օրինակում տեր–ստրուկ փոխհարաբերության վերաբերյալ (ստրուկն է աշխատում, այսինքն՝ հարաբերությունների մեջ մտնում գործիքների, բնության նյութի, տեխնոլոգիայի հետ, ուստի և, թեկուզ հարկադրաբար, զարգացնում է իր ֆիզիկական և մտավոր կարողությունները, ստրուկն է արարում, ստեղծում բարիք, որի հանդեպ տիրոջ հարաբերությունը սպառողական է, «զուտ չքացում». հետևաբար, ի հեճուկս տեր–ստրուկ փոխհարաբերության արտաքին ընկալման ստրուկը, ոչ թե կորուսյալ մի օբյեկտ է, այլ գործունյա՝ սեփական աշխատանքի միջոցով ինքն իրեն վերագտնող սուբյեկտ)[7] գերմանացի մեծ փիլիսոփայի եզրակացություններին ինչ-որ հրաշքով ծանոթացած ոչ մի ստրուկ չի համաձայնի, թե իր կեցությունը իրականում գերադասելի է տիրոջ կեցությունից, այնպես էլ Սիզիփոսը սոսկ դառը քմծիծաղով կկարդար իր փոխարեն խորհրդածող փիլիսոփայի կարծիքը, թե «հարկ է Սիզիփոսին ընկալել որպես երջանիկ»[8]: Սիզիփոսի մասին և նրա փոխարեն մենք կարող ենք փիլիսոփայել (բառիս լավ ու վատ իմաստով), սակայն ինքը՝ Սիզիփոսը, քաջ տեղյակ է, որ դատապարտված է պատժի, և բուն այդ պատիժը՝ որպես գործունեության տեսակ, էութենապես խորթ է մարդ արարածին, անհամատեղելի է նրա բնականոն վիճակին: Եվ վերջապես, Զևսն էլ այնքան միամիտ չէր, որ Սիզիփոսին հնարավորություն թողներ... երջանիկ լինելու:

Ի վերջո, որքան էլ տեսաբանենք, չենք կարող խախտել լեզվական կաղապարը. երբ ասում ենք՝ «Սիզիփոսի աշխատանքը անիմաստ է», ապա ո՞րն է այդ արտահայտության իմաստը, ինչո՞վ է տարբերվում «Սիզիփոսի աշխատանքը անօգուտ է» ձևակերպումից: Չէ՞ որ ավանդաբար Սիզիփոսին ենք հիշատակում, երբ հարկ է լինում բնութագրելու որևէ աշխատանք, զբաղմունք, գործողություն, անգամ մեկ արարք: Պատճառն այն է, որ «սիզիփոսյան աշխատանք» դարձվածքի իմաստը հենց անիմաստության հանգամանքի, մարդկային անագորույն տառապանքի վավերացումն է: Սա իրողության անվերապահ արձանագրումն է, և փիլիսոփայական խորհրդածության նպատակը պիտի լինի ոչ թե մտացա-

---

[7] «Իր շնորհիվ կրկին ինքն իրեն գտնելով՝ նա իր սեփական իմաստն է գտնում հատկապես աշխատանքում, որտեղ, կարծեք, ամփոփված էր միայն օտար իմաստ» (**Гегель**, Феноменология духа // Соч., Т. IV, М., 1959, с. 106):

[8] **Камю А.** Миф о Сизифе, էջ 109:

ծին բացատրությամբ Սիզիփոսին մխիթարելը (առավել ևս՝ նրան իր երջանկավետ վիճակի մասին հուշելը), այլ Սիզիփոս դառնալու վտանգից խուսափելը: Մինչդեռ մենք բոլորս էլ անիմաստությունից տառապող սիզիփոսներ ենք, քանի դեռ սեփական կենսագործունեության մեջ չենք գտնում իմաստավորման որևէ հիմք: Ինքնասպանությունները, հարբեցողությունը, թմրամոլությունը, մոլագարությունները, չհիմնավորված բռնությունները, դաժան ահաբեկչությունները և մարդկային բնականոն կյանքը պատուհասած այլ երևույթներ ստույգ պատասխանն են այն բանի, թե որքանով ենք մենք՝ սիզիփոսներս, երջանիկ:

Մարդիկ կան որոնք կապրին և կը շարժին առանց ամենևին տեղեկություն մը ունենալու այն աշխարհին վրա, զոր աղմուկով կը լեցնեն, ինչպես ճանճերը կը թռչին և կը բզզան առանց կենդանաբանություն գիտնալու:
Հակոբ Պարոնյան

Մեր մեծ երգիծաբան-փիլիսոփան իր խորունկ դիտարկման համար այսօր ճանճի փոխարեն, ամենայն հավանականությամբ, կգործածեր ռոբոտի հետ համեմատությունը: Այն բանից հետո, երբ չեխ գրող Կարել Չապեկը մարդկությանը պարգևեց այս «ռոբոտ» բառը (չեխերեն «ռոբոտա»՝ աշխատանք բառից), մարդ արարածի «ճանճակերպ» կեցության այլ բնութագրումներ նույնպես եղան՝ «միաչափ մարդ», «անդեմ մարդ», «ազատությունից խույս տվող մարդ» և այլն: Անտարակույս, նորանոր մակդիրներ էլ դեռ կհայտնվեն, բայց ախտորոշումը նույնն է լինելու, այն է՝ ժամանակակից մարդը ավելի ու ավելի է հակվում ռոբոտանման կեցությանը և ավելի ու ավելի է հեռանում սեփական կյանքի իմաստի մասին դատողություններից, աշխարհի և աշխարհում իր տեղի ու դերի մասին մտածումներից, այն ամենից, ինչը վաղուց անվանվել է «փիլիսոփայություն»:

Փիլիսոփայության և փիլիսոփայելու անձնային նշանակությունը և հանրային-քաղաքակրթական դերը խիստ կարևորվել են մեր օրերում: Մարդկությանը պատած տարատեսակ ընդոծին ճգնաժամերը և տարերային կործանարար աղետները ամենածայրահեղ լավատեսներին անգամ անխուսափելիորեն մղում են դեպի միակ եզրակացությունը՝ մենք կանգնած ենք ինքնակործանման եզրին: Անհատի կյանքում խորանում է անորոշությունը, ահագնանում է տագնապը ապագայի հանդեպ: Անժխտելի է քաղաքակրթության ամենախոր ճգնաժամը. ժամանակակից մարդը իրեն շրջապատում է տեխնիկական հարաճուն հարմարավետությամբ, ավելի դյուրին և ինքնակամ է տրվում սպառողական գայթակղություններին, ավելի հնազանդորեն է ենթարկվում գովազդի և լրատվության զանգվածային միջոցների նրբահնար ձեռնածությանը, գրեթե ախտածին կախվածության մեջ է հայտնվել սոցիալա-

կան ցանցերից և դրանց ընձեռած երևութական հաղորդակցումից: Առավել վտանգավորը մարդ արարածի էութենական բնութագրի՝ խորհրդածության աստիճանական պակասն է, ավելի ստույգ ձևակերպմամբ՝ հոգևոր-մշակութային խորհրդածության նահանջը գործաբանական-սպառողական բնույթի, եթե խիստ ասենք՝ ռոբոտանման խորհրդածության առջև[9]: Իհարկե պիտի խոստովանել, որ մարդկության պատմության ընթացքում էլ շիտակ խորհրդածության հակված անձինք միշտ փոքրամասնություն են եղել: Սակայն այժմ անհամեմատ մեծացել է տեխնիկական-տեղեկատվական միջավայրի վճռորոշ դերը մարդկանց համակեցության բնականոն կազմակերպման բոլոր խնդիրների կարգավորման մեջ անխտիր: Դեռ ավելին, բոլոր այդ խնդիրների լուծման մեջ ուժեղացել են տեխնոկրատական մեթոդները: Ահա թե ինչու թե՛ համայն մարդկության և թե՛ ամեն մեկիս գոյատևման հրամայականն են դառնում հոգևոր վերածնունդը, արժեքային համակարգի արմատական վերանայումը, կենսական նպատակների և դրանց ձեռքբերման միջոցների իմաստավորման գերխնդիրը:

Ի՞նչ կարող է տալ փիլիսոփայությունը ժամանակակից մարդուն, գտնելո՞ւ է արդյոք նա փիլիսոփայական աշխատություններում իրեն հուզող հարցերի պատասխանը: Անտարակույս, տողերիս հեղինակի՝ մասնագիտության առումով ոչ անաչառ լինելու հանգամանքը (կամ դրա մասին ընթերցողի հիմնավոր կասկածը) խանգարում են անվերապահորեն դրական պատասխանելու սեփական հարցադրումներին: Ուստի ձևակերպենք այսպես. եթե ժամանակակից մարդը որոնել և չի գտել կենսիմաստային հարցերի պատասխանը հոգևոր ոլորտներում՝ կրոնի, արվեստի, բարոյականության, քաղաքականության մեջ (առավել ևս՝ եթե նա հիասթափվել է դրանցից), եթե կյանքի իմաստի որոնումն առհասարակ չի մարել-վերացել սպառողականության, թմրամոլության, հարբեցողության և «իրականությունից փախուստի» («էսկապիզմի») մյուս ձևերի մեջ, ապա փիլիսոփայությունը, թերևս, կարող է զորավիգ լինել հուսահատ և տագնապահար մարդուն: Փիլիսոփայությունը՝ ո՛չ որպես գիտելիքի պատրաստի պահուստ, ո՛չ որպես աֆորիզմների ժողովածու, ո՛չ էլ որպես հավիտենական և անբեկանելի ճշմարտությունների շտեմարան, այլ որպես մարդուն արթմնի նիրհից հանող, առօրեական բթացումից դուրս բերող, նրա ինքնակամ ու երանավետ ռոբոտացումը թոթափող մի ցնցում: Հենց վերջինից է սկսում փիլիսոփայելը՝ **իմաստասիրությունը**, որը ոչ թե սոսկ անգործունյա և ամուլ մի

[9] Շատ տպավորիչ, աֆորիզմի աստիճանի նրբագեղ է ձևակերպել պրոֆեսոր Էդուարդ Հարությունյանը. «Անվայելչության աստիճանի շիտակ ու մեղսավորության մեջ իսկ պարկեշտ Մարդը վերածվել է իր կենսունակության մետաֆիզիկական ավելցուկը անիմաստ մսխելու ցանկությունների անհագուրդ մեքենայի» (**Էդ. Հարությունյան**, Համատեքստի հերթափոխը. մարդկային կեցության սոցիոմշակութային այլատեսակությունների ապականումը // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», № 1, 2016, էջ 11):

սեր է, այլ արգասաբեր, իմաստաստեղծ, ամեն մարդու հոգևոր կյանքը զարդարող արարիչ մի ուժ:

Մտորելով փիլիսոփայության դերի մասին՝ անցյալի խորունկ մտածողներից մեկը՝ Միշել Մոնտենը, առերևույթ պարադոքս պարունակող մի կարծիք է հայտնում. «Ամեն մի փիլիսոփայություն սկսվում է զարմանքից, նրա զարգացումը հետազոտությունն է, վերջը՝ չիմացությունը»[10]: Ընթերցողը դեռ չի էլ հասցնում կարդացածը մարսել և վիճել հեղինակի հետ, երբ ֆրանսիացի փիլիսոփան անմիջապես շարունակում է միտքը. «Հարկ է ասել, որ կա չիմացություն, որն իր զորությամբ ու վեհանձնությամբ, արիությամբ ու ազնվությամբ ոչնչով չի զիջում իմացությանը, այն չիմացությունը, որին հասնելու համար ոչ պակաս գիտելիքներ են պետք, քան գիտակ կոչվելու իրավունքի համար»[11]:

Սա, իհարկե, Սոկրատեսի նշանավոր «Ես գիտեմ, որ ոչինչ գիտեմ» մտքի այլ շարադրանքն է, այդուհանդերձ չմոռանանք, որ փիլիսոփայության «սկզբի» և «վերջի» միջև ամենակարևորն է «հետազոտությունը»՝ փիլիսոփայելը: Եվ եթե մարդն իսկապես հանգում է չիմացությանը, այսինքն՝ «չգիտեմ որն է կյանքի իմաստը» արձանագրմանը, դա ավելի սազական է մտածող մարդուն, քանի որ վկայում է որոնման՝ փիլիսոփայելու մասին[12]:

Փիլիսոփայելու հիրավի հրաշագործ, բախտորոշ ազդեցությանը անզուգական մի ձևակերպում է տվել հայ մեծ փիլիսոփան. «Ովքեր գեթ մի անգամ փիլիսոփայական խոսք են տենչում և պատեհ առիթ են ունենում լոկ մատի ծայրով ճաշակել նրա քաղցրությունը, նրանք բոլոր երկրավոր հոգսերին «մնաք բարյավ» ասելով, ողջախոհ մի մոլությամբ անձնատուր են լինում նրան»[13]:

Իսկ ո՞րն է փիլիսոփայության քաղցրությունը, ի՞նչ է տալիս մահկանացու մարդուն, ի՞նչ կերպ է օգնում նրան իմաստավորելու սեփական կյանքը: «Փիլիսոփայությունը նպատակ ունի զարդարել մարդկային հոգիները»[14]. ավելի սեղմ ու տարողունակ դժվար է ձևակերպել փիլիսոփայության առաքելությունը: Դա վերաբերում է թե՛ մարդու ճանաչողական ունակություններին (միտքը, զգայությունը, երևակայությունը և այլն) և թե՛ «կենդանական ունակություններին» (կամքը, ցանկությու-

---

[10] **Մ. Մոնտեն**, Արժանավայել ապրելու արվեստի մասին, Եր., 1989, էջ 259:

[11] Անդ:

[12] Իսկ չփիլիսոփայող, շիտակ փիլիսոփայելուն անհաղորդ մնացած անձնավորության կարծիքը շատ տպավորիչ է արտահայտել Նար-Դոսը՝ կյանքում իմաստ չտեսնող և ինքնասպանության պատրաստվող կերպարի ձևակերպմամբ. «Քանի՞ գրոշ արժե մի դրություն, որ հին իմաստասերը բանաձևել է այս խոսքերով. «Ես միայն մի բան գիտեմ. այն է՝ ոչինչ չգիտեմ»: Արժե՞ արդյոք, որ մարդ այնքան տանջվի, չարչարվի միմիայն ա՛յն բանի համար, որ վերջ ի վերջո իմանա, թե ինքը ոչինչ չգիտե» (**Նար-Դոս**, Մահը // Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1955, էջ 636–637):

[13] **Դ. Անհաղթ**, Փիլիսոփայության սահմանումները // Երկեր, Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ս. Ս. Արևշատյանի, Եր., 1980, էջ 35:

[14] Անդ, էջ 102:

նը, վարքը և այլն): Դավիթ Անհաղթի համար փիլիսոփայության այս երկակի նպատակադրման մեջ հատկապես գերադասելի է մարդու իրական վարվելակերպի վրա ազդեցությունը: Չէ՞ որ ճանաչողության բարելավմամբ մարդն ինքնաբերաբար չի վեհանում, ճշմարիտն իմանալով՝ նա դեռ ավելի լավն ու բարին չի դառնում, մինչդեռ «բարիքն ավելի նախընտրելի է, քան ճշմարտությունը», ահա և հատկապես փիլիսոփայությունն է, որ զարդարում է մարդկանց բարքերը, վանում կրքերը և այդկերպ բարիք գործում[15]:

Դավիթ Անհաղթի քննարկած փիլիսոփայության վեց սահմանումներից (որ նա շարադրում է ըստ Պյութագորասի, Պլատոնի և Արիստոտելի ըմբռնումների) մեր խնդրո առարկային առնչվում է երրորդը՝ «փիլիսոփայությունը խորհրդածություն է մահվան մասին»[16]: Նախ՝ նա հարկ է համարում բացատրել Պլատոնի տեսակետը և բացահայտել որոշ մեկնաբանների թյուրըմբռնումները և նենգափոխումները, ապա շարադրել սեփական հայեցակարգը:

Ըստ Պլատոնի՝ փիլիսոփայությունն է, որ ստանձնում է մարդու հոգու հովանավորությունը, ազատում է հոգին մարմնական ցանկությունների կապանքներից: Չէ՞ որ մեր հոգին և մարմինն այնքան սերտորեն են կապված, որ հոգին ճանաչողության է հասնում ոչ թե ինքնին, այլ «մարմնի միջով, կարծեք բանտի ճաղերի միջով», ընդ որում՝ սա ահեղ բանտ է, քանի որ «ենթարկվելով կրքերին՝ կալանավորը ամեն մի հսկիչից ավելի աչալուրջ է հսկում սեփական զնդանը»: Ահա թե ինչու «շիտակ փիլիսոփաներն իրենցից վանում են մարմնի բոլոր ցանկությունները, տոկում են և ոչ մի կերպ չեն զիջում, չեն վախենում սնանկությունից և չքավորությունից՝ ի տարբերություն շահամոլ մեծամասնության, և թեպետ նրանք, ի տարբերություն իշխանամոլների և պատվամոլների, հիմք չունեն սարսափելու հոռի կյանքի պատճառած անպատվությունից և անփառունակությունից, սակայն զսպում են ցանկությունները»[17]: «Պետք է գիտենալ,– արձանագրում է Անհաղթը,– որ կյանքը ունակություն է և գոյության պատճառ, իսկ մահը զրկվածություն է և չգոյության պատճառ»: Ապա մանրամասնում է, որ «չար գոյությունը» («կամայական կյանքը» կամ «անառակ կյանքը») այն է, երբ «մարմնական ցանկությունները հաղթում են հոգուն», մինչդեռ «բարի գոյությունը» («կամայական մահը», «առաքինի կենցաղավարությունը») «նշանակում է կենդանի եղած ժամանակ խորհել մահվան մասին՝ կրքերը սպանելու միջոցով»[18]:

Այսպիսով, ո՛չ Պլատոնի ասածը, ո՛չ էլ Անհաղթի մեկնաբանությունը բնավ առնչություն չունեն մարդկային կյանքն անիմաստ համարող, մահն ու չգոյությունը կյանքից առավել արժեքավորող փիլիսոփա-

---

[15] Տե՛ս անդ, էջ 102–103:
[16] Անդ, էջ 73:
[17] **Платон**, Федон // Сочинения в трёх томах. Т. 2, М., 1970, с. 48.
[18] **Դ. Անհաղթ**, Փիլիսոփայության սահմանումները, էջ 76:

յական և կրոնական մեկնաբանությունների հետ: Այս առումով Պլատոն-Անհաղթ տեսակետի լրացումն է Սպինոզայի՝ արտաքուստ կարծեք հակադիր ձևակերպված դրույթը. «Ազատ մարդը ոչ մի բանի մասին այնքան քիչ չի մտածում, որքան մահվան մասին, և նրա իմաստնությունը մտորումներն են ոչ թե մահվան, այլ կյանքի մասին»[19]:

Ինչպես ասվեց, սկզբունքորեն բոլոր մարդիկ են «մոռանում» մահվան անխուսափելիության մասին՝ տրված լինելով առօրեականության հորձանուտին: Բայց կսխալվենք, եթե պնդենք, թե արդեն այդ հիմքով նրանք «ազատ մարդ» են. նույն հաջողությամբ ճանճին կամ ռոբոտին կարելի է «ազատ» հռչակել: Իրականում հատկապես փիլիսոփայությունն է, որպես «մահվան մասին մտածմունք», զարդարում մարդու հոգին և դարձնում հիրավի «ազատ», այսինքն՝ ունակ զսպելու սեփական կրքերը, այդ թվում՝ մահվան վախը:

Քննարկվող թեմայի տեսակետից հույժ ուշագրավ է շվեյցարացի ժամանակակից փիլիսոփա և գրող Ալեն դե Բոտտոնի «Մխիթարություն փիլիսոփայությամբ» գիրքը[20], որի թեմատիկ վեց բաժինները նվիրված են վեց փիլիսոփաների կյանքի և հայացքների բնութագրմանը: Պերճախոսը վերնագրերն են. «Փիլիսոփայական մխիթարանք նրանց համար, ովքեր հանրաճանաչ չեն» բաժինը նվիրված է Սոկրատեսին, «Փիլիսոփայական մխիթարանք նրանց համար, ովքեր տառապում են փողի պակասից»՝ Էպիկուրին, համապատասխանաբար՝ կենսական անհաջողություններից՝ Սենեկային, իրենց տեղը չգտնելուց՝ Մոնտենին, ում սիրտը կոտրված է՝ Շոպենհաուերին, ով շատ է դառնություն տեսել՝ Նիցշեին: Անշուշտ անվիճելի չէ ընտրությունը, սակայն գաղափարը իրականացված է փայլուն. մեծ փիլիսոփաների կյանքը և ուսմունքը իսկապես մխիթարության, հուսադրման, ընթերցողի սեփական կյանքը իմաստավորելու հզոր լիցք ունեն:

Մտորելով կյանքի իմաստի մասին՝ ամեն ոք կարող է դիմել մեծերին (նաև՝ առանց Ալեն դե Բոտտոնի միջնորդության): Կարևորը հետևյալն է. իմանալ ոչ թե սոսկ այն, թե ինչ են արել մեզանից առաջ ապրածները, այլ նաև՝ թե ինչու, ինչպես են փիլիսոփայել (այդկերպ դառնալով և հավիտենապես մնալով մեր ուսուցիչները), մասնավորապես ինչպես են կարողացել ամենաբարդ պայմաններում մնալ ամբողջական անհատականություն, լիարժեք սուբյեկտ, ով ինքն է որոշում սեփական կյանքի գլխավոր նպատակները, հավատարիմ մնում իր հիմնարար արժեքներին և ըստ այդմ՝ կայացնում այս կամ այն վճիռը, գործադրում այս կամ այն միջոցը: Մեծը մեծ է, քանի որ կենսիմաստային հարցերի շուրջ խորհելիս չի բավարարվում արտաքինից իրեն տրված-պարտադրված պատրաստի պատասխաններով, ձգտում է հաղթահա-

[19] **Спиноза Б.** Этика, доказанная в геометрическом порядке // Избранное. Мн.: Попурри, 1999, с. 545.

[20] Տե՛ս **А. де Боттон**, Утешение философией. М., 2014:

րել առօրեականության պարտադրանքը, թոթափել միապաղաղության թմբիրը և դառնալ սեփական «Ես»-ի առաջնորդը դեպի հոգևոր ինքնակատարելագործման բարձունքներ: Սեփական կյանքով և ուսմունքով այդ մեծերը ապացուցել են մի պարզ ճշմարտություն, որը պիտի ընկալենք որպես արժանավոր մարդու կյանքի իմաստի ուղեցույց և իմաստալից կյանքի հավատո հանգանակ. «Մարդս մի բան է, որին պէտք է յաղթահարել, դէպի վեր բարձրացնել»[21], և «Մարդս գաճաճ է իր ներքին հսկայի բաղդատմամբ»[22]: Եվ եթե ըմբռնում ենք մեծերի այս պատգամը, ուրեմն պիտի հասկանանք նաև, որ Սիզիփոս չեն ծնվում, Սիզիփոս դառնում են: Եվ ոչ թե Զևսը, այլ ինքներս ենք մեզ պատժում, դատապարտում սիզիփոսյան կենսակերպի. կամովին զրկվում ենք խորհրդածության կարողությունից, մեզ այլևս հարց չենք տալիս կամ բավարարվում ենք մեզ մատուցվող պատրաստի դեղատոմսերով կամ էլ առհասարակ խուսափում ենք տանջալից հարցերից, նույնիսկ հաճույք ենք զգում օրըստօրե ավելի ռոբոտակերպ դարձող մեր կեցությունից:

... Ու պե՜տք է քայլե՜լ ու քայլե՜լ համառ՝
Ապրելու հսկա տենչը բեռ արած –
Քայլել անիմաստ մի կյանքի համար,
Մարել – ու վառել աստղերը մարած,
Որ – տիեզերքի զառանցանքը մառ
Չցնդի՞ երբեք ու մնա – երազ...

Եղիշե Չարենց

Բնավ հարկ չկա մեծ մտածող լինել՝ ըմբռնելու համար մարդկությանն այսօր սպառնացող ջերմամիջուկային աղետի ողջ լրջությունը: Քաղաքակրթությունը ընդհուպ մոտեցել է ինքնակործանման անդունդին: Իհարկե, նախկինում էլ եղել են մարդկության մոտալուտ կործանման, «աշխարհի վերջի» մասին պատկերացումներ, սակայն երբեք դրա համար այսքան ռազմատեխնոլոգիական հիմք չի եղել: Եվ եթե Աստծո ահեղ ցասման, արդարացի պատժի հետ կապվող աշխարհակործանման պատկերները միամիտ էին թվում, ապա այժմ միայն գերլավատեսությամբ տառապողները կամ երդվյալ տեխնոկրատները չեն տեսնում իրական վտանգը: Այս պայմաններում անհրաժեշտ է դառնում նորովի մոտենալ մարդկային կյանքի իմաստի մասին հարցադրմանը, դրանում տեսնել մի նոր խորություն, որը նախկին դարաշրջաններում չէր կարող բացահայտվել:

Սկսենք այն բանից, որ անհատի տեսակետից՝ «Ես»-ի գոյության փաստն արդեն բավարար է թվում ներքին իմաստավորման համար, և

---

[21] **Ֆ. Նիցշե**, Այսպէս խօսեց Զրադաշտը, Բաքու, 1914, էջ 75:
[22] **Գ. Նժդեհ**, Որդիների պայքարը հայրերի դէմ, Սելանիկ, 1927, էջ 33:

այդ իմաստը կարծեք սահմանափակված է լոկ տվյալ «Ես»-ի կյանքի շրջանակներով: Ողջախոհության մակարդակում էլ «Ես»-ի կյանքի իմաստի որոնումները ներփակված են հենց «Ես»-ի մեջ. տվյալ անձի մահը վերացնում է բուն իսկ հարցադրումը: «Ինձանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ» հայտնի արտահայտությունը ոչ միայն խտացյալ եսականություն է, անտարբերություն և արհամարհանք այլոց հանդեպ (նաև՝ իշխանավորների կառավարչական տկարության և ցինիկ անպատասխանատվության ինքնաբնութագրում, եթե այդ՝ «Après nous le déluge» կարգախոսը իրոք Լյուդովիկոս XV թագավորի հովանավորյալ մարկիզուհի Պոմպադուրինն է), այլ նաև լիովին բանական (դարձյալ ողջախոհության մակարդակում) դիրքորոշում, այն է՝ իմ կյանքն իմաստավորված է լոկ իմ կյանքի սահմաններում, դրանից այն կողմ ինձ ոչինչ չի հետաքրքրում և չի էլ կարող հետաքրքրել: Ըստ էության, այս տեսակետին է ամեն մի չփիլիսոփայող անհատ, անգամ եթե դա երբեք չի խոստովանում և կամ չի էլ խորհրդածում առհասարակ դրա շուրջ:

Այդ նույն տեսակետից՝ գործն առերևույթ այնպես է ներկայանում, թե իբր անհատի կյանքի անիմաստությունը հետևանք է այլոց կյանքի շարունակության փաստի. ես կմահանամ, իսկ ուրիշներն ապրելու են, իմ բացակայությամբ ոչինչ չի փոխվելու աշխարհում, և դա անարդարացի է: Ինչ խոսք, նման հոգեբանության պարագայում անհնարին է մեղմել մահվան սարսափը, մխիթարել իր «Ես»-ի վերացման հեռանկարից տառապող մարդուն: Եթե, սակայն, խորանանք հարցի էության մեջ, ապա ամեն մի առանձին «Ես»-ի կյանքը իմաստավորվում է նախ և առաջ շնորհիվ հենց այն հանգամանքի, որ այդ «Ես»-ի վախճանով չի վերջանում մարդկությունը: Իսկապես, ամենից առաջ մարդկության հարատևման փաստն է, որ իմաստալից է դարձնում մարդու անհատական կյանքը: Չէ՞ որ մեզանից ամեն մեկի կյանքը իրոք որ անիմաստ ու անտանելի կդառնա, եթե ստույգ իմանանք, որ ներկայում ապրողներս մարդկային վերջին սերունդն ենք: Անտանելի տառապանք կդառնա նաև մահը. բուն մահվան գիտակցումն արդեն իմաստազուրկ է դարձնում մեր անձնական կյանքը: Ահա թե ինչու աշխարհակործանման ներկայիս սպառնալիքի գիտակցումը մի նոր, ողբերգական երանգ է հաղորդում մարդու անհատական մահվան և ողջ մարդկության անմահության դիալեկտիկային:

Նկատենք, որ սեփական «Ես»-ի վախճանի անխուսափելիության հետ չհաշտվելու հոգեբանությունն իր հիվանդագին դրսևորումների ժամանակ ակամա բացահայտում է առանձին «Ես»-ի և մարդկության գոյության կապը, թեպետ, այսպես ասած՝ «բացասական նշանով»: Իսկապես, թե՛ անցյալում, թե՛ ներկայում հանդիպում է նաև հետևյալ դիրքորոշումը. եթե հնարավոր չէ, որ ես հավերժ ապրեմ, ապա ինձ հետ թող կործանվի, ուրեմն, ամենայն ինչ: Հեքիաթի այն թագավորը, որ մահվանից առաջ կամեցել է թունավորել ջրերը և իր հետ գերեզման

իջեցնել բոլորին, դրսևորում է այդ հոգեբանությունը անխառն ձևով: Ո՞վ գիտե, մեր անցած-գնացած նախնիներից քանիսը կիրագործեին այդ մտադրությունը, եթե հնարավորություն ունենային:

Ներկա սերունդը նման հնարավորություն ունի: Կարող ենք ասել, որ մարդկությունն արդեն, փաստորեն, զրկվել է իր անմահության կանխավարկածից, որը բխում էր դրա տեխնիկական անհնարինության հանգամանքից (և ծնում անհոգություն). մարդկությունը լիովին «հասունացել» է միջուկային ինքնասպանության համար: Դրա վկայություններն անժխտելի են և հուսահատեցնող: Մասնագետները հաշվել են, որ կուտակված մարտապաշարը հնարավորություն է ընձեռում մեզանից ամեն մեկին սպանել... մեկ միլիոն անգամ (անհրաժեշտ տասնհինգ գրամ պայթուցիկ նյութի փոխարեն առկա է տասնհինգ տոննա): Այնինչ մարդկությունը շարունակում է ավելացնել սպառազինությունների վրա ծախսերը (թվերը սահմռկեցուցիչ են. Ստոկհոլմի խաղաղության միջազգային ինստիտուտի հաշվարկով՝ 2016 թ. աշխարհի պետությունները այդ նպատակով ծախսել են մեկ տրիլիոն վեց հարյուր ութսունվեց միլիարդ դոլար): Ընդլայնվում է միջուկային զենք ունեցող տերությունների թիվը, և եթե նախկինում դրան ձգտելը պաշտոնապես արդարացվում-բացատրվում էր պատերազմից խուսափելու հիմնավորվամբ (ինչպես Անգլիան, որ հռչակեց սեփական միջուկային զենքով մյուսներին «զսպելու» քաղաքականությունը), ապա այժմ արդեն նման աշխարհակործան զենքի են տիրացել ինքնին նախահարձակ պետություններ (Պակիստանի նման), իսկ ոչ հեռավոր ապագայում այդ զենքը կարող է հայտնվել ահաբեկչական խմբավորումների ձեռքին:

Իմանուիլ Կանտը տարբերում էր աշխարհի վերջի երեք տեսակ՝ բնական, գերբնական և հակաբնական: Առաջին տեսակը, ըստ գերմանացի մեծ փիլիսոփայի, համապատասխան է լինելու աստվածային իմաստնության բարոյական նպատակներին, այլ կերպ ասած՝ երբ մարդկությունը սպառելու է ինքն իրեն և լիովին արժանի է դառնալու արարչի ցասմանը: Երկրորդ՝ «գերբնական» բնութագրվող կործանումը լինելու է մեզ համար անհասկանալի, բուն իսկ մեր ըմբռնմանն անմատչելի պատճառներից: Աշխարհի կործանման երրորդ տեսակը Կանտն անվանում է «հակաբնական» կամ «այլասերված», այսինքն՝ մի կործանում, «որը մենք ինքներս ենք առաջ բերելու»՝ սեփական գոյության վերջնական նպատակը սխալ հասկանալու պատճառով[23]: Կանտյան այս դասդասումը միանգամայն տեղին է. իրոք, «հակաբնական» պիտի անվանել հենց մարդկության ինքնակործանումը, այլ ոչ թե կործանումը որևէ արտաքին ուժից[24]: Եվ այդօրինակ հակաբնական և հա-

[23] Տե՛ս **Кант И.** Конец всего сущего // Трактаты и письма. М., 1980, էջ 285:

[24] Իսկ աստծո պատժի մասին Կանտը սրամիտ է նկատում, թե աշխարհը բնաջնջելու ցանկությունն իսկ հուշում է արարչի սխալը. «Առհասարակ, ի՞նչ կարիք կար մարդ ստեղծել», որ հետո էլ՝ «…սեփական արարմունքից դժգոհելով, բարեփոխման ուրիշ ճար չգտներ, քան ոչնչացնելը» (անդ, էջ 281):

կաբանական ինքնակործանման ամենամռայլ նախակարապետն այն իրական վտանգն է, որ մարդկությունը կարող է վերանալ պատահականությունից, համամոլորակային տեխնիկական վթարից: Սպառազինությունների մրցավազքը, մահաբեր զենքի կուտակումը, ավերման նորանոր տեսակի միջոցների գոյացումը, միջուկային զենքի դուրսբերումը տիեզերական տարածություն լրջորեն սպառնում են առհասարակ դուրս գալ մարդու վերահսկողության շրջանակներից, ճակատագրական են դարձնում ապակայունացման միտումը:

Մարդկությունն իր ինքնապահպանումը չի կարող կապել ո՛չ աստծո կամքի, ո՛չ էլ արտաքին աջակցության հետ: Միակ բանական միջոցը մարդկության ներքին միավորումն է: Իհարկե, տրամաբանական է ենթադրել (և այս ենթադրությունն արդեն իսկ բազում կինոնկարների նյութ է), որ արտաքին որևէ վտանգի պարագայում Երկիր մոլորակի մարդիկ իսկապես կմիավորվեն: Անտարակույս, մարդկության առողջ և կենսարար ուժերը չեն հանդուրժի, որ մահավճիռ կայացվի: Եվ դրա համար, իսկապես, քիչ բան չի արվում: Բայց բոլոր տեսակի խաղաղասիրական ջանքերը ամենից առաջ պետք է ստանան խորապես անձնային իմաստավորում, պետք է տագնապը ներքնայնացվի մոլորակի ամեն մի բնակչի կողմից: Ահա այստեղ վճռորոշը ոչ թե միջազգային պայմանագրերն են կամ զինաթափման կոչերը, այլ ամենից առաջ հենց այն բանի գիտակցումը, որ ամեն մեկիս կյանքը իմաստազրկվում է մարդկության կործանման հնարավորության հետևանքով: Միայն ապահովելով մարդկության հարատևությունը, վստահ լինելով, որ մարդկային նորանոր սերունդներ պիտի գան ու գնան դարեր շարունակ, մենք հնարավորություն ենք ստանում իմաստավորելու մեր սեփական, այժմեական գոյությունը: Բարդ ու հակասական միտումներով տառապող ժամանակակից աշխարհին փակուղուց դուրս գալու համար հենց այսպիսի փիլիսոփայություն է հարկավոր: Այս դիրքորոշումը նաև թե՛ առանձին մարդու, թե՛ ողջ մարդկության կյանքի իմաստավորման հիմքն է: Վերջին հաշվով, սա է նաև «ապագայի առջև պատասխանատվություն» արտահայտության էությունը:

Այստեղ կարևոր մի վերապահում անենք. գալիքի հանդեպ մեր պատասխանատվությունը բնավ չի նշանակում, թե ներկայիս սերունդը (ինչպես նաև մեր՝ ժամանակակիցներիս նախորդ սերունդները) ինքն իրեն պիտի ընկալի սոսկ որպես միջոց՝ գալիք սերունդների երջանկավետ կյանքն ապահովելու համար: Այսօրինակ նպատակաբանական մոտեցման վերաբերյալ ճիշտ կլիներ Նիկոլայ Բերդյաևի գնահատականը, թե սա «աստվածացնում է ապագան ի վնաս ներկայի և անցյալի», «համադրում է ապագայի հանդեպ անսահման լավատեսությունը և անցյալի հանդեպ անսահման հոռետեսությունը»[25]: Մեր հարցադրումն այլ է. գնահատելու փոխարեն սթափ արձանագրենք իրողությունը, այն

[25] **Бердяев Н.** Смысль истории. М., 1990, с. 146, 148.

է՝ եթե ներկայիս սերունդը չկարողանա ապահովել մարդկության հարատևության բուն հնարավորությունը, ապա այլևս հիմք չի լինի խոսելու լավատեսության կամ հոռետեսության մասին (ոչ էլ կլինեն դրանց մասին դատող փիլիսոփաներ): Իսկ քանի դեռ այս գիտակցումը չենք կապում մեր «Ես»-ի կյանքի իմաստի հետ, «ապագայի առջև պատասխանատվություն» արտահայտությունը վերացական է. իսկապես, ինչո՞ւ պետք է ես ինձ պատասխանատու զգամ ինձանից հետո, իմ «Ես»-ից հետո եկողների առջև: Ի դեպ, անցած սերունդների առջև պատասխանատվությունը կարծեք ավելի դյուրին է զգալ. նրանք են մեզ թողել որոշակի ժառանգություն, կուտակել գիտելիք, վերափոխել բնությունը, կարգավորել համակեցությունը և այլն: Սակայն մեր պատասխանատվությունն ապագայի առջև և ապագայի համար առնչվում է մեր իսկ «Ես»-ի առջև պատասխանատվությանը: Եվ ամենից առաջ այն բանին, որ անձը կարողանա իր գոյությունը շաղկապել հասարակության հետագա գոյության ապահովմանը: Մարդկության կործանման վտանգն առավել մեծացնում է ամեն մեկիս պատասխանատվությունը իր կյանքի իմաստավորման, ճշմարիտ մարդկային նպատակների ընտրության հարցում: Ինչպես որ եզակի է մեզանից ամեն մեկը, անկրկնելի է որպես տվյալ «Ես», այնպես էլ եզակի է մարդկությունը (համենայն դեպս՝ տիեզերքում այլ բանականություն դեռ չենք հայտնաբերել): Այլ բան պնդող մոտեցումները, փիլիսոփայական համակարգերը, բարոյախոսական սկզբունքները անխուսափելիորեն ապակողմնորոշող են:

Այսպես, կրոնների մեծ մասը, իմաստավորելով հավատացյալի այսկողմնային կյանքը որպես նախապատրաստական մի շրջան այնկողմնային երանավետ կյանքի համար, փաստորեն զրկում է մարդուն կյանքի ճշմարիտ իմաստավորումից: Հանդերձյալ կյանքում հավիտենապես ապրելու, այսինքն՝ սեփական «Ես»-ի, թեկուզ այլափոխված (իսկ ըստ կրոնական պատկերացումների՝ բարեփոխված), հավիտենական գոյության խոստումն ըստ էության մարդուն անջրպետում է մարդկությունից: Չէ՞ որ եթե կա հանդերձյալ և հավիտենական կյանք, որում ամենատես Աստված ապահովում է ամեն մեկիս արդարացի հատուցում, ապա մարդը կարող է անգամ համակերպվել մարդկության կործանման հնարավորությանը. միջուկային արհավիրքն իսկ չի սպառնում իմ «Ես»-ի հավիտենական գոյությանը: Միևնույն ժամանակ, գաղտնիք չէ, որ կրոնները նրբորեն օգտագործում են մահվան սարսափը հավատացյալներին հնազանդեցնելու, կամազուրկ դարձնելու, ձեռնածության ենթարկելու նպատակով:

Ապակողմնորոշող են նաև փիլիսոփայական այն համակարգերը, ավելի ստույգ ձևակերպենք՝ փիլիսոփայելու այն եղանակները, որոնք կյանքի իմաստը ներփակում են լոկ անձնական տառապանքների, անձնական շահերի, եսական օգուտի շրջանակներում, իսկ հանրային կյանքի խնդիրները, ողջ մարդկության հեռանկարները, եթե անգամ

քննության են առնվում, ապա անհատի բախտից անկախ և կամ՝ ի հակադիր նրա: Այս մոտեցումը, իհարկե, արտացոլում է արդի հանրային կյանքի իրողությունը՝ շուկայական բարոյականության արժեքների գերիշխանություն, ծայրահեղ անհատապաշտություն և անկուշտ ագահություն, անձնական հաջողության կուռք, օգուտի և շահի անզուսպ հոգեբանություն և դրա համաճարակային բազմապատկում գովազդի և զանգվածային լրատվության միջոցներով, այս ամենի անխուսափելի հետևանքը՝ մարդկանց միջև հարաճուն օտարումը, անհատի ողբերգական միայնակությունը և հուսակտուր փախուստը դեպի ներանձնական ապրումներ:

Այդուհանդերձ, շիտակ փիլիսոփայությունը չի կարող սահմանափակվել իրողության, թեկուզ սուր և տպավորիչ, բայց հիասթափեցնող, պարտվողականության դատապարտող արձանագրմամբ: Մարդկային կյանքը իմաստազրկող հայացքները, որքան էլ գեղարվեստորեն տպավորիչ լինեն և համոզիչ մատուցված, միևնույնն է, խիստ ասած, ձև են «փիլիսոփայություն խաղալու»[26]: Չմոռանանք մեծերի պատգամը՝ փիլիսոփայության նպատակը մարդու հոգու զարդարումն է: Եվ եթե ժամանակակից մարդը որոնում և չի գտնում իր կյանքի իմաստը կրոնի, արվեստի, հոգևոր որևէ այլ ոլորտում, իրեն հարազատ դարձած զբաղմունքի բնագավառում, եթե արդեն դույզն-ինչ գիտակցել է, թե իրեն խորթ գաղափարները և ուժերը ինչպես են իրեն աստիճանաբար վերածում հլու-հնազանդ խամաճիկի, եթե, հետևաբար, նա զգում է փիլիսոփայությանը հաղորդակից լինելու կարիքը, ապա փիլիսոփան ոչ թե պիտի վհատեցնի, այլ տոգորի նրան հավատով և վստահությամբ, օգնի նորովի կառուցարկելու իր աշխարհը, դառնալու սեփական կյանքի ճարտարապետը, խորհրդածության և գործունեության լիարժեք սուբյեկտ: Իհարկե, փիլիսոփայությունը չունի պատրաստի պատասխաններ բոլոր անձանց, բոլոր դեպքերի համար, և բացառված չէ, որ «փիլիսոփայության քաղցրությունը» նա մեկեն չընկալի, սակայն թեկուզ փիլիսոփաների կյանքին ու հայացքներին ծանոթանալը կլինի «փիլիսոփայական մխիթարության» այն առաջին քայլը, որ նրան հնարավորություն կընձեռի ինքնուրույն որոնելու, գտնելու, արարելու կյանքի սեփական իմաստը: Եվ եթե առերևույթ այդ իմացությունը նման լինի չիմացության, վերջինս սակայն լինելու է փիլիսոփայելու արգասիք, ուստի և, Մոնտենի ձևակերպմամբ, «զորությամբ ու վեհանձնությամբ, ա-

[26] «Երբ փիլիսոփայությունն առողջ է, ապա օժտված է մարդկային մտքի բարձունքներին հասնելու առավելությամբ, դրա հետ մեկտեղ՝ անսահմանորեն խորը անկում է ապրում այն դեպքերում, երբ կառուցված է փտած հիմքի վրա: Այդժամ նա ինքն իրեն նման չէ, նրան չեն ճանաչում և մյուսները. նրա տեղը գրավում է ինչ-որ մի բան, որը նրա հետ ոչինչ ընդհանուր չունի և ծառայում է սոսկ հանրության մոլորեցնելուն: Հասարակության քայքայումը բավարարվում է նմանօրինակ փիլիսոփայություն խաղալով, քանի որ անկումային բարոյականությունը կարիք ունի մոլորական մղումների» (**Дюринг Е.** Ценность жизни. М., 2000, с. 36):

րիությամբ ու ազնվությամբ» առանձնացող չիմացություն: Փիլիսոփայությամբ է շաղախվում այն հավատո հանգանակը, որի հիմքում ընկած է սեփական վախճանականության և մարդկության հավիտենականության հրամայականի ագուցումը, որ ամեն մի հասուն, արժանավոր մարդ յուրովի է անում:

Վստահաբար կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից մարդկությունը կհաղթահարի ներկայիս ճգնաժամային վիճակը: Հաջորդ սերունդները դարձյալ ու վերստին կորոնեն և կձևակերպեն կյանքի իմաստի հիմնախնդիրը՝ իրենց ժամանակներին, իրենց առջև ծառացած խնդիրներին համապատասխան: Նրանց, անշուշտ, հարկ չի լինի մտահոգվելու մարդկության իսպառ բնաջնջման վտանգով: Եվ այդ սերունդները մեր մասին դատելու են ոչ այնքան ըստ մեր գիտական և տեխնիկական նվաճումների, առավել ևս՝ ոչ ըստ ռազմական հզորության, այլ ըստ մեր իմաստնության, բարոյականության, մարդու և ողջ մարդկային քաղաքակրթության գոյության իմաստին տված մեր պատասխանների:

Բանալի բառեր – *վաղանցիկություն, կյանքի իմաստ, մահվան վախ, «սիզիփոսյան աշխատանք», աշխարհի վերջ, փիլիսոփայություն, մարդկություն, Դավիթ Անհաղթ*

ВАЛЕРИЙ МИРЗОЯН – *От ощущения мимолётности к осмыслению вечности*. – Уже первое осознание мимолётности бытия, неотвратиимости собственной кончины заставляет человека искать ответы на вопрос о смысле жизни. В статье рассматривается роль философии и философской рефлексии в понимании современных смысложизненных вопросов. Подчёркивается, в частности, что если человек уходит от этих вопросов в сферу быта, в развлечения, в потребительскую психологию или же не довольствуется ответами, которые дают ему религия, искусство, богатство, власть, то именно философия в состоянии помочь ему осознать свою ответственность как за собственную жизнь, так и за сохранение разумной жизни на планете Земля.

Ключевые слова: *мимолётность, смысл жизни, страх смерти, “сизифов труд”, конец сущего, философия, человечество, Давид Непобедимый*

VALERI MIRZOYAN – ***From the Feeling of Passing into Understanding the Meaning of Eternity***. – The feeling of ephemerality makes a person look for the meaning of life. The article discusses the role of philosophy and philosophizes for understanding the meaning relating to contemporary life issues. In particular, it is stressed that if a person «forgets» these issues in household problems, if he or she is not satisfied with the answers that give religions, arts, wealth, power, then philosophy might help him or her understand his or her personal responsibility for his life, as well as for the maintenance of intelligent life on planet Earth.

Key words: *ephemerality, meaning of life, fear of death, Sisyphus job, the end of the world, philosophy, humankind, David Invincible*